լով սա Գրիգոր երջանիկ և աստուածաբան վարդապետին. որոյ հայրն Թաճատին կոչի և մայրն Կիւլվարդ և քոյրն Զարդար։ Սա վասն վերոյասացեալ աւգտակար պատճառացն ցանկացող եղև այս պատուական գրոցս. որ ասի այսմաւուրք ըստ իւրաքանչիւր աւուրց պատմութեանց, որ իբրև զբուրաստան զմայլեցուցանէ զքիմս բանասիրաց. քանզի սա ի մանկութենէ անարգեաց զսէր և զհեշտութիւն, խոշորազգեստ լինելով մսահատ և պարկեշտ կրօնիւք. իբրև զտատրակ ողջախոհ քաղաքավարութեամբ զառօրեայ կեանս անցուցանելով և մանաւանդ որ բազում աշխատանս կրեաց վասն ս. Երուսաղիմայ. զի այս քսան ամ է որ հաւատարմաբար և սրտցաւութեամբ ծառայէ Դերեզմանին Քրիստոսի, երբեմն ի Ս. Յարութիւն կալով, զՁահս և զկանթեղս, զմոմս և զճրագս վառելով և զայլ ամենայն ծառայութիւն առնելով. և երբեմն հրամանաւ Գրիգոր հայրապետին ս. Երուսաղիմայ ի հեռուստ տեղիս՝ ի ծով և ի ցամաք գնալով, զմահ յանձն առնլով. և զպակասութիւն ս. Երուսաղիմայ հոգալով. և որ ինչ ի հալալ և ի յարդար վաստակոց իւրոց մասն բաժնի իւրն հանէր, ոչ վայրապար մսխէր և վատնէր. այլ զամենայն յաստուածակոյս կողմն ի յերկինս գանձէր անդրժելի զողոց և ուտչաց՝ ըստ Տեառն բանին, և յիշատակ հոգւոյ իւրոյ և իւրայնոցն արժանացուցանէր։ Որ և մինն ի բազմացս գիրքս այս, զոր ի Թուականիս Հայոց ՌՁԲ (= 1633) ամին, գնացեալ ի Կ. Պոլիս, բազում Ջանիւ և դեգերանօք եդ սկիզբն առնել զգիրքս զայս քահանայի միոյ Աւետիս կոչեցելոյ. և եհաս աւարտ սորին ՌՁԲ (= 1633) ամին, ձեռամբ սուտ անուն Յակոբ զպրի, յօգոստոս ամսոյ ժ.ի և յաւուր շաբաթի. ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետի։ Եւ եդ զսա յիշատակ ի ս. քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Ս. Յարութեան Քրիստոսի, որ է Վերնատուն Հայոց. որ երկրորդ Գողգոթայ կոչի. որ է վիճակ ազգիս Հայոց»։ Երեմիա Քէօմիւրճեան եւս իր Orwqrmpkwli մէջ յիշատակած է Մհտ. Մարկոսը, որ 1649 թուականին Օգոստոսի սկիզբը նաւ մը վարձելով՝ Կ. Պոլսէ Երուսաղէմ կ'առաջնորդէ ինսնսուն անձերէ բաղկացած ուխտաւորներու խումբ մը, որուն մէջ էր ինքը Երեմիա պատանին, իր մօրը և անոր քեռիին՝ Մհտ. Ամբակումի հետ։ Մհտ. Մարկոսի մասին տեսնել (Դարանաղցի. նաև ՄՁ. Թ. 546)։